

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Դավիթ Հարությունյանի և Արվիհնե Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-211-08.02.2013-ՊԻ-01)0/0 վերաբերյալ:

1. 2-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող օրենքի 24.3-րդ հոդվածի 5.1-ին մասով նախատեսված դրույթներն անհրաժեշտ է նախատեսել օրենքի 24.3-րդ հոդվածի 4.1-ին մասում: Օրենքի նախագծի նշված դրույթները վերաբերում են պատգամավորի բացակայելն անհարգելի համարելու մասին էթիկայի հանձնաժողովի եզրակացության քննության ընթացակարգին, մինչդեռ օրենքի 24.3-րդ հոդվածի 5-րդ մասը վերաբերում է էթիկայի հանձնաժողովի կողմից դիմումի մերժման հիմքերին: Այդ առումով օրենքի դրույթներով կարգավորվող

հարաբերությունների տրամաբանական հաջորդականությունը պահպանելու նպատակով առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «5.1-րդ մասով» բառերը փոխարինել «4.1-ին մասով» բառերով:

Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասով լրացվող օրենքի 99-րդ հոդվածի 3.2-րդ մասը խմբագրման կարիք ունի.

2) 5-րդ մասով գործող օրենքի 99-րդ հոդվածի փոփոխվող 8-րդ մասից անհրաժեշտ է հանել «և էթիկայի հանձնաժողովի եզրակացության» բառերը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից պատգամավորի բացակայությունն անհարգելի համարելու վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվում է էթիկայի հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը խմբագրման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմայանը:

Օրենքի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Ազգային ժողովի կանոնակարգ»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի
մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) փոփոխության են ենթարկվում Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովի իրավասությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է ՀՀ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովի հետ կապված իրավահարաբերություններին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի վերաբերյալ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական բյուջեի մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

Պ-211-08.02.2013-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24.2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «ա.1» կետով.

«ա.1) Ազգային ժողովին եզրակացություն է ներկայացնում մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից պատգամավորի բացակայելն անհարգելի համարելու մասին:»:

Հոդված 2. Օրենքի 24.3-րդ հոդվածում՝

- 1) վերնագրում «դիմումը» բառը փոխարինել «հարցը» բառով,
- 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 5.1րդ մասով.

«5.1. Էթիկայի հանձնաժողովը սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «ա.1» ենթակետով նախատեսված հարցի քննությունը սկսում է սույն օրենքի 99-րդ հոդվածի 3.3-րդ կետով նախատեսված Աշխատակազմի տեղեկանքի հիման վրա՝ այն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում:»:

Հոդված 3. Օրենքի 24.4-րդ հոդվածի 1-ի մասի՝

- 1) «դ» կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «ա.1», «բ» եւ «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս դիմումի կամ սույն օրենքի 99-րդ հոդվածի 3.3-րդ կետով նախատեսված տեղեկանքի ուսումնասիրության արդյունքները հանձնաժողով ներկայացնելու իրավասություն ունեցող հանձնաժողովի անդամը, իսկ հարակից զեկուցմամբ՝ դիմումում կամ տեղեկանքում նշված պատգամավորը:» ,
- 2) «գ» կետից «, եթե քվեարկությանը մասնակցել է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին» բառերը հանել,
- 3) «է» կետի «1-ին կետի «դ» » բառերը փոխարինել «1-ին կետի «ա.1», «դ» » բառերով, իսկ «հարցերով ներկայացված դիմումի» բառերը փոխարինել «հարցերի» բառով,
- 4) «ը» կետի «դիմումը, » բառը փոխարինել «դիմումը կամ սույն օրենքի 99-րդ հոդվածի 3.3-րդ կետով նախատեսված տեղեկանքը» բառերով, իսկ «դիմումում» բառերը փոխարինել «դիմումում կամ տեղեկանքում» բառերով,
- 5) «ժ» կետում առաջին «դիմումի» բառը փոխարինել «հարցի» բառով, իսկ երկրորդ «դիմումի» բառը փոխարինել «դիմումի, ինչպես նաեւ սույն օրենքի 99-րդ հոդվածի 3.3-րդ կետով նախատեսված տեղեկանքի» բառերով:

Հոդված 4. Օրենքի 99-րդ հոդվածում՝

- 1) 3-րդ մասի «բ» եւ «գ» կետերում «պատճառի» բառերը փոխարինել «պատճառի (այդ թվում՝ սույն կետով չնախատեսված անձնական այլ պատճառի)» բառերով,
- 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3.2-րդ, 3.3-րդ եւ 3.4-րդ մասերով.

«3.2. Սույն հոդվածի 3-րդ կետի «բ» եւ «գ» կետերով նախատեսված դեպքերում պատգամավորի բացակայությունը կարող է հարգելի համարվել մեկ հերթական նստաշրջանի ոչ ավելի, քան 10 օրվա նիստերի ընթացքում անցկացված քվեարկություններից:

3.3. Եթե պատգամավորը հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից բացակայել է եւ այդ բացակայությունները սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով չեն համարվել հարգելի, ապա Աշխատակազմը սույն հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում Էթիկայի հանձնաժողով է ներկայացնում տեղեկանք նշելով այդ պատգամավորի անունը, ազգանունը, ընտրատարածքի համարը, հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների եւ դրանցից պատգամավորի բացակայությունների քանակը:

3.4. Եթե սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «ա.1» ենթակետով նախատեսված հարցի քննարկման արդյունքում Էթիկայի հանձնաժողովն ընդունում է մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից պատգամավորի բացակայելն անհարգելի համարելու մասին եզրակացություն, ապա այն 24 ժամվա ընթացքում ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:»,

3) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունն առանց քվեարկության ընդգրկվում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի եւ առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում եւ քննարկվում է արտահերթ:»,

4) 5-րդ մասում «Պատգամավորն» բառը փոխարինել «Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունում նշված պատգամավորն» բառերով,

5) 6-րդ, 7-րդ եւ 8-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Յուրաքանչյուր պատգամավորի բացակայությունների վերաբերյալ Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողովում քննարկվում է առանձին՝ սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես հիմնական գեկուցող հանդես է գալիս Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու իրավասություն ունեցող հանձնաժողովի անդամը, իսկ որպես հարակից գեկուցող կարող է հանդես գալ եզրակացությունում նշված պատգամավորը կամ նրա լիազորած այլ պատգամավորը:

7. Հարցի քննարկման ավարտին քվեարկության է դրվում մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից պատգամավորի բացակայելն անհարգելի համարելու մասին Էթիկայի հանձնաժողովի եզրակացությանը հավանություն տալու մասին հարցը, որի վերաբերյալ Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

8. Եթե քվեարկության արդյունքում սույն հոդվածի 7-րդ կետում նշված Ազգային ժողովի որոշումը ստանում է ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա այդ որոշման եւ Էթիկայի հանձնաժողովի եզրակացության հիման վրա կազմվում է պատգամավորի լիազորությունների դադարման մասին արձանագրություն, որն ստորագրում է Ազգային ժողովի նախագահը եւ հնգօրյա ժամկետում ուղարկում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նպատակն է մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից պատգամավորի բացակայելն անհարգելի համարելու մասին որոշման կայացումը ՀՀ Ազգային ժողովի Էթիկայի հանձնաժողովին վերապահելը: Այս գործառույթի վերապահումը Էթիկայի հանձնաժողովին պայմանավորված է այն հանգամանքով, որ այն հանդիսանում է անկախ եւ անկողմնակալ մարմին, որում ներկայացված են Ազգային ժողովում առկա բոլոր քաղաքական ուժերը: Հենց այս հանգամանք էլ ապահովում է Էթիկայի հանձնաժողովի կողմից հիմնավորված եւ անկողմնակալ որոշումների կայացումը: